ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ԽԱԺԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Խաժակյան.

Ի պատասխան Ձեր՝ 26.03.2018թ. հ.Ե-2/58 գրության՝ Օրբելի փողոցի հ.18 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի կցակառույցի օրինականացման խնդրի կապակցությամբ, տեղեկացվում է.

Երևանի քաղաքապետի 31.05.2007թ. հ.1381-Ա որոշմամբ ճշտվել են մի շարք, այդ թվում, նաև Օրբելի փողոցի հ.18 հասցեում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի զբաղեցրած հողամասի սահմանները՝ սեփականատերերին անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցելու համար թողարկվել է հ.962-2007 գլխավոր հատակագիծը: Տարածքի տեղազննումից և նախկինում ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ Օրբելի փողոցի հ.18 շենքի հ.1 բնակարանի կցակառույցն, ըստ վերը նշված թողարկված գլխավոր հատակագծի, բազմաբնակարան բնակելի շենքին տրամադրված հողամասի սահմաններում է: ՀՀ կառավարության «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. հ.912-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանը խնդրի լուծման առնչությամբ իրեն վերապահված գործառույթների շրջանակում այլևս անելիքներ չունի: Կցակառույցի օրինականացման համար քաղաքացին պետք է դիմի ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ